Doi: 10.56737/2953-7843-2025.06-82

ՄԱՆԵ Կ. ԿՈՆԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՀԲԸՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1919–1920 ԹԹ.[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից եւ դաշնակիցների՝ վերջինիս տարածքների՝ մասնավորապես Կիլիկիայի եւ հարակից շրջաններում վերահսկողության հաստատումից հետո, Միջագետքում ապաստանած արեւմտահայ գաղթականների վերադարձի հնարավորություններ ստեղծվեցին։ Վերադարձին նպաստեցին մի շարք գործոններ. Մուդրոսի զինադադարի 16-րդ հոդվածի համաձայն՝ թուրքական զորքերը պետք է դուրս բերվեին Կիլիկիայից[2]։ Ֆրանսիան[3], որ կոչ էր անում հայ գաղթականությանը վերադառնալ Կիլիկիա[4], պարտավորվում էր վերջիններիս տալ կյանքի անվտանգության երաշխիքներ։ Տրվում էին նաեւ երաշխիքներ, որ «հայրենադարձներու տուները, հողերը եւ գոյքերը պիտի անմիջապէս վերադարձուին իրենց»[5], եւ ի վերջո Կիլիկիայում էին «Հայկական լեգեոնի» գումարտակները, որոնք պատրաստ էին պաշտպանելու կիլիկիահայությանը թուրքական ոտնձգություններից։ Վերադարձի ծախսերը հիմնականում հոգալու էր

---

[1]* *Ստացվել է՝ 22.05.2025, գրախոսվել է՝ 24.05.2025։ էլ. հասցե՝* koninyan.mane@yandex.com:

[2] *Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), Երեւան, 1972, էջ 539։*

[3] *Մուդրոսի զինադադարից հետո Ֆրանսիան բավարար չափով զորքեր չուներ Մերձավոր Արեւելքում՝ Կիլիկիայի գրավումն իրականացնելու համար։ Դրանով պայմանավորված՝ ֆրանսիական հրամանատարությունը համաձայնեց, որ Կիլիկիան գրավեն անգլիական ուժերը։ Միայն 1919 թ. նոյեմբերին ֆրանսիական զորամասերը փոխարինեցին անգլիացիներին։*

[4] *Ֆրանսիան իր օգնության վարչությունն ուներ՝ «Կիլիկիոյ հայրենադարձի եւ օգնութեան ծառայութիւնը»՝ Կիլիկիայում ֆրանսիական Առողջապահության եւ հանրային օգնության ծառայության տնօրեն բժիշկ Լուի Ռոլլենի ղեկավարությամբ։ Այս կառույցը պիտի նպաստեր հայերի վերահաստատմանը Կիլիկիայում, տե՛ս «Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան», հտ. Ա., 1906–1940, Գահիրէ–Փարիզ – Նիւ Եորք, 2006, էջ 99։*

[5] *Տե՛ս* Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, *Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914–1972, Անթիլիաս–Լիբանան, 1975, էջ 78։*

ֆրանսիական կողմը, ինչով պայմանավորված՝ Հալեպում ու Սիրիայում[6] ձեւավորվեցին հատուկ ներգաղթի գրասենյակներ։ Սիրիայում եւ Հայաստանում ֆրանսիական գերագույն կոմիսար գեներալ Ժորժ Պիկոն կոչ էր անում հայ գաղթականներին համախմբվել Կիլիկիայում, իսկ գնդապետ Բրեմոնը հայտարարում էր. «Մեր ցանկութիւնն է, որ հայերը տէր դառնան իրենց երկրին։ Մենք պիտի առաջնորդենք զիրենք, մինչեւ որ անոնք աճին, մեծնան եւ սկսին ինքզինքնին կառավարելու գործին մէջ յաջողիլ, այն ատեն մնանք բարով պիտի ըսենք եւ հեռանանք»[7]։

Դեռեւս պատերազմի տարիներից ջանասիրաբար գործող բարեգործական կառույցները գաղթականության վերադարձը կազմակերպելու գործում կրկնակի եռանդով սկսեցին գործել։ Անհրաժեշտ էր ձեւավորել գաղթականության վերադարձը կազմակերպող ու ղեկավարող մարմին։ Հայ գաղթականության վերադարձը կազմակերպելու գործում դաշնակիցների աջակցությունից զատ մեծ դեր խաղացին նաեւ հայկական բարեգործական կառույցները, որոնցից մեկը «Հայկական բարեգործական ընդհանուր միությունն» էր, որը հայերի վերադարձի անվտանգությունն ապահովելու նպատակով սերտ համագործակցում էր ֆրանսիական իշխանությունների հետ։ Փաստորեն՝ կիլիկիահայության վերադարձի կազմակերպման գործում կարեւոր դերակատարություն ունեցան մի կողմից դաշնակիցների՝ հատկապես Ֆրանսիայի տված խոստումները, մյուս կողմից՝ հայկական բարեգործական կազմակերպությունների ցուցաբերած աջակցությունը, որոնք նպաստեցին ջարդերի ու տեղահանության ենթարկված հայ գաղթականության շրջանում հայրենիք վերադառնալու հույսերի վերածննդին։

ՀԲԸՄ-Ի ԿԻԼԻԿԻԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԳՈՐԾՈՒՄ

Կիլիկիահայության մեծ մասը, վերադարձը դիտարկելով որպես պատմական արդարության վերականգնման քայլ, դա ընդունեց մեծ

---

[6] *Սուրիոյ երեք գլխաւոր քաղաքներն էին՝ Հալէպը եւ Հալէպի շրջակայ գաւառակները՝ Տէր Զօր, Ռաքքա, Ճարապլուս, Մեմպիճ, Պապ եւ Ազէզ, Պէյրութը (Պէյրութի շրջակայքը՝ Սայտա, Ճիւնիէ, Ղազիր, Զահլէ, Բայաք, Տրիպոլիս [Թարապուլուս էլ Շամ], Լաթաքիա, Համա, Հոմս) եւ Դամասկոսը։ Սուրիոյ կեդրոնական փոքր քաղաքներն էին Իտլիպը, Ճիսր-Շուղր, Բաս-Պաալպէք եւ Պաալպէք (Տաթեւ Տարեցոյց, Բ. Տարի, 1926, Հալէպ, էջ 291–292)։*

[7] *Տե՛ս Կ. Իզմիրլեան, Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս (քննական տեսութիւն), 1964, Պէյրութ, տպ. «Սեւան», էջ 209–210։*

ոգեւորությամբ։ Կ. Իզմիրլեանն իրավամբ նշում է, որ «վերապրող բեկորներու աչքին Կիլիկիան՝ որպէս ապագայ հայրենիք, շատ աւելի բաղձալի էր, քան Մայր Հայաստանի[8] որեւէ մասը, ուր տուն-տեղ չունէին... անոնց փափաքն էր վերադառնալ ծննդավայր եւ տէր դառնալ իր կալուածներուն եւ դիրքերուն»[9]։ Դա պայմանավորված էր նաեւ այն հանգամանքով, որ Կիլիկիան արդեն դաշնակիցների ազդեցության տակ էր, եւ նրանք լիահույս էին, որ վերջիններիս օգնությամբ ձեռք կբերեն նաեւ ինքնավարություն։ Հայ գաղթականների վերադարձի հիմնական կենտրոններից մեկը դարձավ Կիլիկիան[10], եւ, ինչպես նշում է Լ. Զորմիսյանը, «ինքնաբեր, զանգուածային ու տարերային դարձաւ վերադարձի շարժումը դէպի տուն»[11]։

Կիլիկիայի ազատագրումից եւ այնտեղ ֆրանսիական մանդատի հաստատումից հետո ՀԲԸՄ-ն, որ որդեգրել էր «Հայը հայով հայուն համար»[12] կարգախոսը, մի շարք քայլեր ձեռնարկեց՝ աջակցելու Միջագետքում ապաստանած կիլիկիահայությանը՝ իր նպաստը բերելով վերջիններիս վերադարձին, Կիլիկիայում հայկական բնակավայրերի վերակառուցմանը, կրթության ու առողջապահության ապահովմանը։ ՀԲԸՄ-ն ի սկզբանե բուռն գործունեություն ծավալեց Կիլիկիայի տարբեր շրջաններում՝ Մերսինում, Ադանայում, Դյորթյոլում (Զորք-Մարզպան), Հաճնում, Այնթապում, Մարաշում, Տարսոնում, Օսմանիեում եւ այլուր։

ՀԲԸՄ-ի Կենտրոնական վարչության 1918 թ. նոյեմբերի 12-ի թվակիր նամակում՝ ուղղված Կիլիկիայի Սահակ Խապայան կաթողիկոսին, այսպես էր ասվում. «ՀԲԸ Միութիւնը արդէն ի սպաս դրած է իր բարոյական եւ նիւթական բոլոր միջոցները եղբայրական օգնութեան եւ հայրենիքի վերաշինութեան գերազանցապէս նուիրական գործին։ Ձեր Վեհափառութիւնը

---

[8] *Հարկ է նշել, որ 1919 թ. հունիսի 25-ին Փարիզի Հաշտության գերագույն խորհրդին ներկայացող սուլթանի պատվիրակը՝ վարչապետ Ֆերիդ փաշան հայտարարել էր, որ պատրաստ է ամեն օգնություն ցուցաբերել բոլոր այն հայերին, որոնք կցանկանան գնալ եւ բնակություն հաստատել Հայաստանի Հանրապետությունում, տե՛ս* Կ. ԻԶՄԻՐԼԵԱՆ, *Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը..., էջ 207։*

[9] *Անդ։*

[10] *Զինադադարից անմիջապես հետո, երբ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայ գաղթականների հայրենիք վերադառնալու համար, նրանց վերադարձի հիմնական կենտրոնները դարձան Կիլիկիան, Կ. Պոլիսը եւ Հալեպը։*

[11] *Տե՛ս* Լ. ԶՈՐՄԻՍԵԱՆ, *Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հտ. Գ. (1908–1922), Պէյրութ, տպ. «Սեւան», 1975, էջ 514։*

[12] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, յունվար–փետրվար, թիւ 67։*

վստահ կրնայ ըլլայ, որ Կեդրոնական Վարչական ժողովս ըրաւ եւ պիտի ընէ ինչ որ հնարաւոր է՝ աղէտեալներու վիճակը բարելաւելու համար»[13]։

ՀԲԸՄ-ի գործիչները շատ հաճախ հանդես էին գալիս նաեւ քաղաքական հարթակներում՝ մասնակցելով տարբեր միջազգային ժողովների, քննարկումների՝ բարձրաձայնելով հայ գաղթականների՝ դեպի պատմական հայրենիք վերադարձի անհրաժեշտությունը, հայերի խախտված իրավունքների եւ դրանց պաշտպանության հարցերը։ Կիլիկիահայության կազմակերպված վերադարձին աջակցելու նպատակով ՀԲԸՄ-ն, իր տարբեր մասնաճյուղերով հանդերձ, ներդրեց նյութական ու մարդկային զգալի ռեսուրսներ՝ նպատակ ունենալով ապահովել հայրենի բնակավայրերում հայկական ներկայության վերսկսվելուն։ ՀԲԸՄ-ի առաջնային գործը եղավ կիլիկիահայ գաղթականներին «սնուցանել, հագուեցնել, դարմանել, խնամել եւ ինքնաբաւ դարձնել...»[14]։

Կիլիկիահայության վերադարձին նպաստեցին հատկապես ՀԲԸՄ-ի՝ Կիլիկիայի մասնաճյուղերի վերակազմավորումը, որոնց էր վերապահված անմիջական մատակարարման գործը։ Որպես նավահանգստային քաղաք՝ Մերսինը դարձավ հայ գաղթականների առաջին հանգրվանը, որտեղից հետո նրանք մեկնում էին իրենց բնակավայրերը։ 1919 թ. փետրվարի 1-ին Ադանայի առաջնորդ Գեւորգ վարդապետ Ասլանյանի նախաձեռնությամբ Մերսինում վերաբացվեց ՀԲԸՄ-ի Կիլիկիայի առաջին մասնաճյուղը, որի «գլխաւոր մտահոգութիւնը Կիլիկիա համախմբուող տարագիրներու օգնութեան եւ որբերու պատսպարութեան ծանր գործն էր, եւ Մերսին պիտի ըլլար այդ գործին շտեմարանը, անկէ պիտի ճիւղաւորուէին Միութեան օգնութիւնները դէպի Կիլիկեան ուրիշ կեդրոններ»[15]։ 1919 թ. առաջին ամիսներին գրեթե ամեն շաբաթ շուրջ 1000 գաղթականներ էին ժամանում Մերսին՝ «զարհուրելի թշուառութեան մէջ»[16]։ 1919 թ. նոյեմբերի վերջին Պորտ Սայիդի գաղթականը ցրվեց՝ տեղափոխվելով Մերսին։ Չնայած առաջացած բազում դժվարություններին՝ ՀԲԸՄ-ն արդյունավետ կազմակերպեց օգնության գործը։ Հայրենիքի վերաշինության, դեպի Կի-

---

[13] *Տե՛ս Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ..., էջ 80։*

[14] *Տե՛ս Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան 1906–1931, հտ. Ա., Բարիզ, էջ 161։*

[15] *Տե՛ս Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան..., էջ 127։*

[16] *Անդ։*

լիկիա հայրենակիցների վերադարձը խրախուսելու, վերջիններիս կենցաղը կազմակերպելու նպատակով ՀԲԸՄ-ն կազմակերպեց «վերաշինեալ նպաստներ»[17], որոնք զինվորական իշխանությունների միջոցով պետք է ուղարկվեին ՀԲԸՄ-ի Կիլիկիայի մասնաճյուղերին՝ գաղթականներին բաշխելու նպատակով։

1919 թ. փետրվարին Ադանայի վերապրողները Հալեպից եւ Մերսինից անցնում են Ադանա՝ իրենց հետ ունենալով «ներքին գաւառներու բնիկ վերապրողներու ստուար խումբեր»[18]։ Ադանայում գաղթականները ծայրահեղ թշվառության պայմաններում էին։ Ճիշտ է՝ ֆրանսիական կողմից տրամադրված նպաստները ժամանակավորապես մեղմում էին ճգնաժամը, սակայն բավարար չէին։ Նման պայմաններում անհրաժեշտ էին արմատական քայլեր՝ ուղղված ազգային կյանքի վերակազմավորմանը։ Այդ առաքելությանը լծվեց ՀԲԸՄ-ն, որն իր կազմակերպական ներուժն օգտագործեց՝ տեղում կրթական, առողջապահական ծառայություններ ստեղծելու եւ կիլիկիահայության՝ Կիլիկիայում գոյատեւման հեռանկարը պահպանելու նպատակով։ ՀԲԸՄ-ի Կենտրոնական վարչությունը, չսպասելով տեղական մասնաճյուղի[19] ստեղծմանը, Մերսինի մասնաճյուղի միջոցով կազմակերպեց նպաստների արագ եւ արդյունավետ բաշխումը Կիլիկիայի տարբեր բնակավայրեր։ Մերսինի մասնաճյուղի միջոցով Ադանայի եւ շրջակայքի հայ գաղթականներին փոխանցվեց 1000 եգիպտական ոսկի, շուրջ 500 եգիպտական ոսկի արժողությամբ հագուստ, դեղորայք, գործիքներ։ Կենտրոնական ժողովը նաեւ որոշել էր «հայրենիք վերադարձող տարագիրներուն ապրուստի, հաց հայթայթելու ծառայող նպաստներուն նախապատրաստութիւն տալ»[20]։ Մինչեւ 1919 թ. մայիս եւս 1000 եգիպտական ոսկի փոխանցվեց Ադանա[21]։ 1919 թ. վերջին Հալեպից, Դեյր-էլ-Զորից, Սեբաստիայից եւ այլ վայրերից Ադանա ժամանեցին շուրջ 10 հազար գաղթականներ՝ «ամենաթշուառ կացութեան մէջ... կօշիկ չունին, երկար ատենէ ի վեր ոչ անկողին տեսած են, ոչ ալ վերմակ, եւ զարհուրելի կերպով աղտոտ են»[22]։

---

[17] *Տես «Միութիւն», Գահիրէ, 1919, յունվար–փետրվար, թիւ 67։*

[18] *Տես Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան..., էջ 131։*

[19] *ՀԲԸՄ-ի՝ Ադանայի մասնաճյուղը վերաբացվեց 1919 թ. մայիսի 31-ին՝ Ադանայի առաջնորդ Գեւորգ վարդապետ Ասլանյանի նախաձեռնությամբ։*

[20] *Տես «Արեւ», Ալեքսանդրիա, 1919, թիւ 129 (594), 12 մարտ։*

[21] *Տես Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան..., էջ 131։*

[22] *Տես Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան..., էջ 132։*

Ադանայի գաղթականների սոցիալ-տնտեսական պայմանները մեղմելու եւ զբաղվածության որոշակի մակարդակ ապահովելու նպատակով, 1919 թ. հուլիսին ՀԲԸՄ-ն հիմնեց Ադանայի Այրիանոց-աշխատանոցը՝ Մերմերլի թաղամասում։ Աշխատանոցը հագեցած էր գուլպայագործության հինգ մեքենայով եւ գորգագործության 20 դազգահով, ուր «հարիւրաւոր այրիներ եւ աղջիկներ արհեստ սորվեցան եւ իրենց ապրուստը կը ճարեն պարկեշտօրէն»[23]։ 1920 թ. հունվարի տվյալներով՝ ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչությունը Ադանայի գաղթականներին «10 սնտուկ հագուստ կը հասցնէ՝ Մերսինի իր մասնաժողովին միջոցաւ»[24]։

1919 թ. մարտից սկսել էր հաճնցիների վերադարձն իրենց ծննդավայր։ Միսիոներ Ալիս Քիփ Քլարքը այսպես է նկարագրում Հաճնի վիճակը. «Մարդ կրնայ գրեթէ երեւակայել, որ ասիկա Պոմպէյն է... քաղաքին մէջ գնուելիք բան չէր մնացած... քաղաքը մաքրուած էր այնպէս, ինչպէս ագռաւը չպիտի մաքրէր... ժողովուրդը սարսափելի վիճակի մէջ է»[25]։ Գաղթականության սոցիալ-տնտեսական վիճակը շարունակում էր մնալ ծայրահեղ ծանր. ամենուրեք տիրում էր թշվառություն։ Նրանց մեծ մասը զրկված էր տարրական կեցության պայմաններից, այդ թվում՝ մշտական բնակության համար նախատեսված պատսպարանից, ինչի հետեւանքով բազմաթիվ ընտանիքներ ստիպված էին ապրել կիսավեր շենքերում, ժամանակավոր հյուղակներում, շատերը «բացօթեայ կը մնան... անոնք տարագրութեան աննկարագրելի ցնցոտիներու մէջ են... հիւանդութիւնները ազատ ասպարէզ գտած են ու տակաւ համաճարակի բնոյթ կը ստանան»[26]։ Ամենուր զգացվում էր կենսական անհրաժեշտ պարագաների՝ սննդամթերքի, հագուստի, դեղորայքի, ինչպես նաեւ տարրական աշխատանքային գործիքների խիստ պակաս, անգամ «արհեստաւորներ չէին կրնար աշխատանքի լծուիլ՝ գործիքներու չգոյութեան պատճառով»[27]։ Նման իրավիճակը պարտադիր էր դարձնում համակարգված օգնության անհրաժեշտությունը։ Կենտրոնը, մինչեւ Հաճնի մասնաճյուղի կազմավո-

---

[23] *Տե՛ս Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն, հաշուեկշիռ եւ տեղեկագիր 11-րդ, 12-րդ, 13-րդ եւ 14-րդ շրջաններու, 1916–1919, Գահիրէ, Հ.Բ.Ը. Միութեան տպ., 1920, էջ 124։*

[24] *Տե՛ս Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան..., էջ 132։*

[25] *Տե՛ս Հայկական բարեգործական ընդհանուր միութեան Հաճնի որբանոցը (1919–1920), ներածութիւն, թարգմանութիւն եւ ծանօթ.՝ Ա. Տագէսեան, Պէյրութ, 2020, էջ 19–20։*

[26] *Տե՛ս Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան..., էջ 139։*

[27] *Տե՛ս Հայկական բարեգործական ընդհանուր միութեան Հաճնի որբանոցը..., էջ 20։*

րումը[28], Մերսինի մասնաճյուղի միջոցով հաջորդաբար Հաճն էր առաքում սնունդ, հագուստ, դեղորայք, արհեստագործական գործիքներ։

1919 թ. առաջին ամիսներին վերապրող այնթապցիները շարժվում են ծննդավայր՝ իրենց հետ տանելով շուրջ 2000 գաղթական տարբեր նահանգներից՝ մեծ մասամբ Սեբաստիայից։ Մինչեւ Այնթապի մասնաճյուղի վերաբացումը[29], ՀԲԸՄ-ի առաջին նպաստները Այնթապ էին հասնում Հալեպի մասնաճյուղի միջոցով։

1919 թ. Մարաշի եւ շրջակա գյուղերի վերապրողների թիվը հասնում էր 20 հազարի։ Սկզբնական շրջանում նպաստներն ուղարկվում էին ՀԲԸՄ-ի Հալեպի մասնաճյուղի միջոցով։ Անմիջապես ուղարկվում է 500 եգիպտական ոսկի, 1920 թ. փետրվարին՝ 400 ոսկի գումար՝ «անմիջական պէտքերու համար»[30]։ Դրամական օգնությանը զուգահեռ ուղարկում էր նաեւ հագուստ, դեղորայք եւ այլ իրեղեն։

Գաղթական զեյթունցիների վերադարձը կազմակերպելու եւ Զեյթունի վերաշինության համար ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչությունը հատկացնում է 50 հազար եգիպտական ղուրուշ գումար[31]։

Տեղին է հիշատակել «Միություն» պարբերականի խմբագրականի կարծիքը՝ կապված ՀԲԸՄ-ի՝ կիլիկիահայությանը ցուցաբերած օգնությունների հետ. «Հ.Բ.Ը. Միութիւնը յանձն առած է նաեւ նիւթապէս օգնել Կիլիկեան կարօտ քահանաներուն, որ գրեթէ ցնցոտիներ հագած են։ Արձակուած բազմաթիւ հայ զինուորներուն եւ անոնց ընտանիքներուն զգեստ եւ գործիք հայթայթած է։ Մէկ խօսքով, Բարեգործականը օր աւուր կ՚ընդլայնէ իր գործունէութիւնը եւ Կիլիկիոյ կարօտ ժողովուրդին համար նախախնամական բարիք մը կը դառնայ»[32]։ Իսկ ՀԲԸՄ-ի Կահիրեի մասնաճյուղի կոչը՝ ուղղված եգիպտահայությանը, բացահայտ դրսեւորումն է ՀԲԸՄ-ի մարդասիրական գործունեության. «Բազմաթիւ հիւանդներ կը դարմանուին Միութեան երեք հիւանդանոցներուն մէջ։ Այրիներ ու թշուառ աղջիկներ կը գործեն Միութեան Ատանայի եւ Հալէպի աշխատանոցներուն մէջ ու կ՚ապրին իրենց սեփական աշխատանքներով։ Տասնեակ

---

[28] *ՀԲԸՄ-ի՝ Հաճնի մասնաճյուղը վերաբացվեց 1919 թ. օգոստոսի 15-ին՝ ՀԲԸՄ-ի պատվավոր անդամ Հակոբ Քրքեշարյանի նախաձեռնությամբ։*

[29] *ՀԲԸՄ-ի՝ Այնթապի մասնաճյուղը վերաբացվեց 1919 թ. հուլիսին՝ 123 անդամներով։*

[30] *Տես Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան..., էջ 142։*

[31] *Տես «Միութիւն», Գահիրէ, 1919, մայիս–յունիս, թիւ 69։*

[32] *Տես «Միութիւն», Գահիրէ, 1919, յուլիս–օգոստոս, թիւ 70։*

հազարաւոր մերկ տարագիրներ ու գաղթականներ Միութեան Կեդր. Հանդերձարանին շնորհիւ իրենց հանդերձեղէն պէտքերն ունեցան»[33]։ Հարկ է նշել, որ գաղթականների տեղափոխման, սննդով եւ հագուստով ապահովելու գործում ՀԲԸՄ-ն մեծ ծառայություն մատուցեց եգիպտահայ Կարմիր խաչը, Մերձավոր Արեւելքի նպաստամատույց կազմակերպությունը, Մերսինի ֆրանսիական զինվորական իշխանությունը։ Այս կառույցների համատեղ ջանքերն ուղղված էին կիլիկիահայության սոցիալ-տնտեսական խնդիրների արդյունավետ լուծմանը։

ՀԲԸՄ-Ի՝ ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՅՈՒՅԱԲԵՐԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Ըստ Կիլիկիայի ֆրանսիացի կառավարիչ գնդապետ Բրեմոնի հաղորդման՝ Կիլիկիա վերադարձած հայերի թիվը 1919 թ. վերջին հասնում էր շուրջ 120 հազարի, որոնց 80 տոկոսը կազմում էին կանայք եւ երեխաները[34]։ Ըստ տարբեր աղբյուրների՝ պատերազմից հետո Կիլիկիայում հաստատվել էր շուրջ 150 000 հայ[35]։

Կիլիկիա ներգաղթն սկսելուն պես ՀԲԸՄ-ի Կենտրոնական վարչությունը հայրենակիցներին որպես առաջին օգնություն առաքեց 2000 եգիպտական ոսկի, ավելի քան 3000 եգիպտական ոսկի արժողությամբ հագուստ, դեղորայք, արհեստագործական գործիքներ, մեքենաներ (դերձակի, կոշկակարի, ատաղձագործի, երկաթագործի եւ այլն)[36]։

1918 թ. սեպտեմբերից մինչեւ 1919 թ. հունիս ընկած ժամանակամիջոցում ՀԲԸՄ-ն շուրջ 35161 եգիպտական ոսկու նպաստներ է բաշխել տարբեր հաստատությունների[37]։ 1919 թ. հունվար–փետրվար ամիսների

---

[33] *«Արեւ», Ալեքսանդրիա, 1920, թիւ 133 (748), 17 մարտ։*

[34] *Տե՛ս* E. Bremond, La Cilicie en 1919–1920, Buenos aires, 2009, p. 15–16.

[35] *Տե՛ս* Բ. Եղիազեան, *1975, էջ 83,* Լ. Զորմիսեան, *1975, էջ 550,* Հ. Թոփուզեան, *Սիրիայի եւ Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841–1946), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1986, էջ 162։*

[36] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, յունվար-փետրվար, թիւ 67։*

[37] *ՀԲԸ Միությունը հետեւյալ հաստատություններին է նպաստ բաշխել. Պորտ Սայիդի որբանոցին՝ 4582, Պորտ Սայիդի Սիսուան վարժարանին՝ 2243, Պորտ Սայիդի այրիանոցին՝ 196, Կահիրեի տիկնանց հանդերձարանին՝ 1495, Դյորթ Յոլի Քելեկյան որբանոցին՝ 1478, Դամասկոսի գաղթականներին եւ որբերին՝ 1725, Հալեպի գաղթականներին եւ որբերին՝ 3417, Մերսինի, Ադանայի՝ 4185, Դերայի՝ 800, Երուսաղեմի՝ 200, Մալաթիայի՝ 100, Հայֆայի, Աքիայի, Տիբերիայի՝ 206, Հաճնի որբանոցի՝ 300, Զեյթունի վերաշինության՝ 500, Կեսարիայի այրիներին, որբերին՝ 300, Կահիրեի վերջին աղետյալներին՝ 254, անհատական նպաստներ՝ 668, զանազան նպաստներ՝ 1109, տե՛ս «Արեւելեան մամուլ», Զմյուռնիա, 1919, թիւ 2053։*

ընթացքում Կիլիկիա ներգաղթյալներին օգնելու նպատակով ՀԲՄ-ն կազմակերպեց հետեւյալ օգնությունները. «2000 եգիպտական ոսկի, 41 հակ նոր հանդերձեղէն եւն (10 100 կտոր) 7 սնտուկ դեղօրայք, 39 սնտուկ գործիք եւ մեքենայ (դերձակի, կարուհիի, կօշկակարի, ատաղձագործի, երկաթագործի եւ սափրիչի յատուկ) ասոնք եւս աւելի քան 3000 Ե. Ո. արժողութեամբ»[38]։ ՀԲՄ-ի՝ դեպի Կիլիկիա ուղարկած նպաստների 1919 թ. հուլիս-օգոստոս ամիսների ընդհանուր համագումարը կազմում էր 858 275 եգիպտական ղուրուշ[39]։

1920 թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀԲՄ-ի Կենտրոնական հանդերձարանի հիմնադրամը շուրջ 3706 եգիպտական ոսկի արժողության 12 975 կտոր հագուստ է ուղարկել Կիլիկիայի շրջանի գաղթականներին եւ որբերին, իսկ ընդհանուր նպաստները կազմել են 12 650 եգիպտական ոսկի[40]։ «Արեւ» պարբերականի խմբագրականը, շատ բարձր գնահատելով ՀԲՄ-ի հանդերձարանի հիմնադրամի ցուցաբերած օգնությունը կիլիկիահայությանը, գրում է. «Հազարաւար մերկեր հագուած են շնորհիւ այդ նախախնամական Հանդերձարանին, որ ընդհանուր գնահատման եւ օժանդակութեան արժանի է»[41]։

1920 թ. մայիս ամսվա տվյալներով՝ ՀԲՄ-ն Կիլիկիայի հայ կարոտյալներին փոխանցել է 11 000 եգիպտական ոսկի[42]։ Կիլիկիայի ՀԲՄ-ի անդամներից (քննիչ) Մ. Ուղուրլյանի (Մելքոն Ասատուր) տեղեկագրերից երեւում է, որ 1920 թ. ամռան ընթացքում ՀԲՄ՝ դեպի Մերսին, Ադանա, Դյորթյոլ, Հալեպ, Ալեքսանդրեթ օգնության եւ փրկության գործի համար տրամադրվել է շուրջ 7000 եգիպտական ոսկի[43]։

Որբախույզ Ռուբեն Հերյանին[44] որբահավաքի եւ թուրքական հարեմներից հայ աղջիկների եւ կանանց ազատագրման գործում մեծ օգնու-

---

[38] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, յունվար–փետրուար, թիւ 67։*

[39] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, յուլիս–օգոստոս, թիւ 70։*

[40] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1920, յունուար-փետրուար, թիւ 73։*

[41] *Տե՛ս «Արեւ», Ալեքսանդրիա, 1920, թիւ 124 (739), 25 փետրուար։*

[42] *Տե՛ս «Արեւ», Ալեքսանդրիա, 1920, թիւ 7 (777), 26 մայիս։*

[43] *Տե՛ս «Արեւ», Ալեքսանդրիա, 1920, թիւ 20 (780), 25 յունիս։*

[44] *Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո սիրիական անապատներից, իսլամական միջավայրից հայ որբերին ազատագրելու համար լուրջ քայլեր ձեռնարկվեցին։ Այդ գործն ստանձնեցին հայկական ու միջազգային տարբեր բարեգործական կազմակերպություններ, հայրենակցական միություններ ու անհատ որբախույզներ։ ՀԲՄ-ի, Եգիպտահայ նպաստամատույցի եւ Միացյալ որբախնամի որոշմամբ Ռուբեն Հերյանը մեկնեց Սիրիա՝ որբահավաք աշխատանքի։*

թյուն ցուցաբերեցին հատկապես ՀԲԸՄ-ի՝ Սիրիայի եւ Կիլիկիայի մասնաճյուղերը, որոնք պետք է «կարելի եղած ամէն դիւրութիւն ընծայեն Տ. Հերեանի եւ Ժողովիս ուղղեն այս մասին տեղեկութիւններ եւ մասնաւորապէս ազատագրեալներու վիճակացոյցներ եւ պատկերներ»[45]։ Նրանց միջոցով կենտրոնը Ռ. Հերյանի տրամադրության տակ է դնում 250 եգիպտական ոսկի՝ հարեմներից հայ կանանց, աղջիկների եւ որբերի ազատագրման համար[46]։

ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ՝ ՀԲԸՄ-ԻՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԲԸՄ-ն սերտորեն համագործակցում էր օտար նպաստաբաշխ ընկերությունների՝ «Ամերիկյան կարմիր խաչի», Մերձավոր Արեւելքի նպաստամատույց կազմակերպության» (Near East Relief) *հետ՝ «աւելի լայն չափով եւ արդիւնաւոր կերպով օգնելու համար մեր տարաբախտ հայրենակիցներուն»[47]։ Այդ մասին է վկայում նաեւ Կիլիկիայի Սահակ Խապայան կաթողիկոսը, նշելով. «Բարեգործականը ոչ միայն Ազգին անսահման վստահութեան արժանացած է, այլ նաեւ օտարներու հիացման առարկայ եղած է»[48]։*

Կիլիկիահայության վերադարձի, նրանց պատսպարելու, աջակցելու գործում առանցքային դեր են խաղացել Կիլիկիայի ֆրանսիական իշխանությունները։ ՀԲԸՄ-ն բավականին լավ հարաբերություններ ուներ Կիլիկիայում հաստատված ֆրանսիական զինվորական իշխանության եւ հատկապես Կիլիկիայի ֆրանսիացի կառավարիչ գնդապետ Բրեմոնի հետ, ինչն ավելի դյուրին էր դարձնում գաղթականների օգնության գործը։ Դեպի Կիլիկիա հայ գաղթականների վերադարձի գործընթացը կարգավորելու եւ նրան իրավական հիմք տալու նպատակով, գնդապետ Բրեմոնը որոշ հրամանագրեր էր ստորագրել։ Օրինակ՝ թիվ 65 հրամանով չեղյալ էր համարվում «թրքական վարչութեան կողմէ կատարուած գոյքի վաճառքը՝ աքսորեալներու տասանորդները կամ տուրքերը վճարելու որո-

---

[45] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, նոյեմբեր–դեկտեմբեր, թիւ 72։*
[46] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 1։*
[47] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1920, յունուար–փետրուար, թիւ 73։*
[48] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1921, մայիս–յունիս, թիւ 81։*

շումը (25 ապրիլ, 1919)»[49]։ Հատկապես կարեւոր էր թիվ 107 հրամանը, որը վերաբերում էր մահմեդականների մոտ գտնվող «հայ կանանց եւ որբերի ազատագրմանը (9 օգոստոս, 1919)»[50]։ Պատահական չէր նաեւ, որ ՀԲԸՄ ուղարկված նվիրատվությունների մեջ եւս մեծ թիվ էին կազմում կոնկրետ հայ որբերի եւ հարեմներից հայ կանանց ու աղջիկների ազատագրման համար արված նվիրատվությունները, ինչը նաեւ նպաստեց, որ 1919 թ. հուլիսից սկսած՝ «հայ կիներու, աղջիկներու եւ մանչերու հաւաքման գործը բուռն թափ ստանայ»[51]։ Ըստ Բրեմոնի՝ Կիլիկիա հասած որբերի թիվը հաշվվում էր ավելի քան 10 հազար[52]։ Հատկապես հայ որբերի պաշտպանության, որբանոցների բացման գործում Բրեմոնը նշանակալի աջակցություն էր ցուցաբերում ՀԲԸՄ-ին։ Դրա վկայությունն էր ֆրանսիական «Կիլիկիա հայրենադարձի եւ օգնության վարչությունը», որը 1919 թ. դեկտեմբերի 6-ին առանձնացավ «Հանրային առողջապահության ծառայությունից»։ Այն ոչ միայն հոգում էր իր խնամքի ներքո եղած որբանոցի կարիքները, այլ նաեւ ապահովում էր ՀԲԸՄ-ի որբանոցների սննդամատակարարումը։ Օրինակ՝ ՀԲԸՄ-ի՝ Հաճնի որբանոցն այդ կառույցից ստանում էր կանոնավոր օգնություն՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 8 թուրքական ոսկի, Դյորթյոլի որբանոցի յուրաքանչյուր երեխայի համար՝ 5 թուրքական ոսկի, Մերսինի որբանոցի յուրաքանչյուր երեխայի համար՝ 6 թուրքական ոսկի[53]։ Ֆրանսիական իշխանության ջանքերով Ադանայում կազմավորվեց երեք գաղթական, ուր կարող էր ապաստան ստանալ 7000–8000 գաղթական՝ «այնտեղէն ցրուելու համար Կիլիկիոյ զանազան շրջանները»[54], որը եւս մեծ օգնություն էր հայ գաղթականներին եւ օժանդակություն՝ հայկական բարեգործական կառույցներին։

Կիլիկիա գաղթած հայ որբերին ու գաղթականներին աջակցելու գործում, ֆրանսիական իշխանություններից բացի, առանցքային դեր է խաղացել նաեւ «Մերձավոր Արեւելքի նպաստամատույց կոմիտեն», որը

---

[49] *Տե՛ս Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, հտ. Ա., 1906–1940, Գահիրէ–Փարիզ – Նիւ Եորք, 2006, էջ 98։*

[50] *Անդ։*

[51] *Տե՛ս «Կիլիկիա», Ատանա, 1919, 13 հուլիսի։*

[52] *Տե՛ս E. Bremond, էջ 16։*

[53] *Տե՛ս Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան..., էջ 100։*

[54] *Տե՛ս Բ. Եղիազեան, Ժամանակակից պատմութիւն..., էջ 82։*

բազմիցս կրկնապատկելով ամերիկահայերի՝ հայ որբերին ու գաղթականներին ուղարկված գումարները՝ փոխանցել է ՀԲԸՄ-ին՝ օժանդակելու նրա օգնության գործին։

ՀԲԸՄ-ն խոր երախտագիտությամբ է հիշում «Մերձավոր Արեւելքի նպաստամատույց կոմիտեի» Հալեպի մասնաճյուղի ղեկավար դր. Լեմպարթին, որն իր պաշտոնավարության ընթացքում անսովոր եռանդ ու անձնազոհություն էր ցուցաբերել. «Մասնաւորաբար Մարաշի, Այնթապի եւ Ուրֆայի վերջին դեպքերու ընթացքին, երբ յարաբերութեան ամեն միջոց բացարձակապէս դադրած էր գոյութիւն ունենալէ, անօրինակ քաջասրտութեամբ մը եւ իր անձը քանիցս վտանգելով, յանդուգն ճամբորդութիւններ ըրաւ եւ յաջողեցաւ պարեն եւ նպաստ հասցնել աղետեալ վայրերը... հազարաւոր որբերու եւ այրիներու կեանքը կը պարտինք այդ իրապես դիւցազն Ամերիկացիին, որ երբեք չի սակարկեց իր օգնութիւնը եւ բնաւ չընկրկեցաւ որեւէ խոչընդոտի առջեւ»[55]։

Մերձավոր Արեւելքի նպաստամատույց կոմիտեի շատ ներկայացուցիչներ բարձր են գնահատել ՀԲԸՄ-ի գործունեությունը Կիլիկիայում եւ հարակից տարածքներում։ Օրինակ՝ կոմիտեի Բեյրութի մասնաճյուղի ներկայացուցիչ Ջեյմս Հ. Նիքոլն այսպես է բնութագրել ՀԲԸՄ-ի գործունեությունը. «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը կատարելապէս վստահելի հաստատութիւն մըն է։ Կը մտադրեն քանի մը ընդարձակ Որբանոցներ հաստատել։ Հարկաւ դուք կ՚ըմբռնէք այս հայերու ազգայնական սուր ոգին, զոր ո՛չ մի Ամերիկացի իրաւունք ունի այպանելու»[56]։ Նպաստամատույց կոմիտեի Կ. Պոլսի ներկայացուցիչ Ու. Փիթը հիշատակելով, որ ՀԲԸՄ-ն ընդարձակել է իր գործունեության շրջանակները՝ Եգիպտոս, Սիրիա, Պաղեստին, Կիլիկիա, գրում է. «Ուրախ առիթ է դիտել, թե անոնք ընդհանրապէս կը գործեն այնպիսի վայրեր, ուր մենք ներկայացուցիչ չունինք»[57]։ ՀԲԸՄ-ի եւ միջազգային բարեգործական կառույցների համատեղ աշխատանքը ունեցել է առանցքային նշանակություն կիլիկիահայության սոցիալ-տնտեսական եւ կենսական խնդիրների արդյունավետ լուծման գործում։

---

[55] Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1920, թիւ 76։
[56] Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, թիւ 72։
[57] Անդ։

ՀԲԸՄ-Ի՝ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ

ՀԲԸՄ-ն զգալի դերակատարություն ունեցավ Կիլիկիայի վերակառուցման գործընթացում՝ կազմակերպելով որբանոցների, հիվանդանոցների եւ այլ կարեւոր հաստատությունների վերակառուցում, հիմնադրում ու անհրաժեշտ պարագաների մատակարարում։ Կառույցն առանձնակի կարեւորություն էր տալիս որբանոցների ստեղծմանը՝ դրանք դիտելով որպես հայ բեկորների պաշտպանության եւ ազգային ինքնության պահպանման կարեւոր օջախներ, որոնք «կենսական էին ընկերային կեանքի արագ վերականգնումին համար»[58]։ ՀԲԸՄ-ի՝ Հալէպի մասնաճյուղի տեղեկագրերից մեկում ցավալիորեն ներկայացվում էր այն դժբախտ իրականությունը, որտեղ ապրում էին հայ որբերը. «Որբի մը կորուստը՝ ցեղին ապագային տեսակէտով՝ անդարմանելի է. հետեւաբար, անոնց գոյութեան եւ պահպանումին համար կ՚արժէ գերագոյն զոհողութիւնը ընել։ Ցաւալի բան մը եթէ կայ, այն ալ այլազգիներու տուներէն հաւաքուած եւ տարիներով փողոցային կեանքով ապրած ու մեծցած այդ հէք թշուառները բարոյական անկումի եւ այլասեռման արգահատելի աստիճանի մը վրայ կը գտնուին եւ անոնց համար, ամէն բանէ աւելի, ամէն բանէ վեր, բարոյական առողջ դաստիարակութիւն պէտք է, որ մոռցնել տայ՝ անոնց ապրած սեւ թշուառութեան կեանքին կողմերը, եւ նոր կեանքի ուժեղ սերմերը դնէ անոնց հոգիներուն մէջ»[59]։ Ուստի Մուդրոսի զինադադարից հետո ՀԲԸՄ-ի առաջնային խնդիրներից մեկը դարձավ Կիլիկիա գաղթած հայ որբերի համար որբանոցների բացումը, ինչը նպատակ ուներ ապահովելու վերջիններիս նվազագույն կենսական պահանջմունքները։

Պատերազմի ավարտից հետո հարյուրավոր գաղթականների հետ Կիլիկիա տեղափոխվեցին նաեւ չորքմարզպանցիները կամ դյորթյոլցիները[60]։ Այստեղ ապաստանած որբերին պատսպարելու նպատակով ՀԲԸՄ-ի ջանքերով վերակառուցվեց Քելեկյան[61] որբանոցը։ ՀԲԸՄ-ի

---

[58] Տե՛ս Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան..., էջ 97։

[59] Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, թիւ 68։

[60] ՀԲԸՄ-ի՝ Դյորթյոլի մասնաճյուղը վերաբացվեց 1919 թ. ապրիլին՝ շուրջ 150 անդամով։

[61] Քելեկյան որբանոցը, որ ՀԲԸՄ-ի ջանքերով եւ բարերար Տիգրան Քելեկյանի միջոցներով սկսել էր իր գործունեությունը 1912 թ., 1915 թ. Հայոց ցեղասպանության տարիներին դարձավ թուրքական վայրագ քաղաքականության զոհերից մեկը։ 1915 թ. մարտի սկզբներին օսմանյան կառավարությունը գրավեց Քելեկյան որբանոցը, ինչի հետեւանքով 20 որբ ուղարկվում են Խառնբի (Հարունիե) գերմանական որբանոց, 30-ը՝ Ադանա, իսկ որոշ որբեր

քննիչ-պատվիրակ Միքայել Նաթանյանը, որ որբահավաքի գործ էր ստանձնել Սիրիայում՝ «բոլորովին անծնող եւ անոք մանչ որբեր կը ժողվէ Միութեան Տէօրթ-Եօլի Քէլէկեան որբանոցին համար»[62]։ Թուրքերի քանդած ու կողոպտած որբանոցը բարեկարգելուն իր նպաստը բերեց բարերար Տիգրան Քելեկյանը՝ Մ. Նաթանյանին ուղարկելով 500 անգլիական ոսկի[63]։ 1919 թ. հուլիսին վերաբացվեց Քելեկյան որբանոցը՝ շուրջ 200 երկսեռ որբերով։ Քելեկյան որբանոցի որբերն ունեին նաեւ հովանավորներ. «Ասոնց պաշտպաններն են Նիւ-Եօրքի Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց Կեդր. Որբախնամը, որ արդէն 100 որբերու պաշտպաններ արձանագրած է՝ տարեվճարը կեդրոն ղրկելով, եւ Պրիւքսէլի Միսաք Մսրեան Որդիք Տունը՝ որ 30.000 ֆր.ի տարեվճար մը արձանագրած է»[64]։

«Միություն» թերթի 1919 թ. մայիս–հունիս ամիսների հաշվետվությունից պարզ է դառնում, որ ՀԲԸՄ-ն Դյորթյոլի Քելեկյան որբանոցին հանգանակել է 300 եգիպտական ոսկի, 10 հակ հագուստեղեն, 200 զույգ կոշիկ, 3 արկղ սպասք[65], հուլիս–օգոստոս ամիսների կտրվածքով՝1000 եգիպտական ոսկի, ինչպէս նաեւ մեծաքանակ սնունդ՝ շաքար, թեյ, խտացրած կաթ եւ այլ իրեղեն[66], սեպտեմբեր–հոկտեմբերի ամիսների կտրվածքով՝ 500 եգիպտական ոսկի, 8 արկղ գրենական պիտույքներ՝ շուրջ 10 850 եգիպտական ոսկի արժողության[67]։ Քելեկյան որբանոցի 1919 թ. ընդհանուր ծախսը կազմել է 4 650 555 եգիպտական ոսկի[68]։

Քանի որ որբերի թիվն օրեցօր աճում էր, իսկ ժամանակավոր կացարանները չէին բավարարում, նոր որբանոց բացելու անհրաժեշտություն առաջացավ։ Եւ հիմնվեց Դյորթյոլի Սիսուան որբանոցը՝ շուրջ 450 երկսեռ որբերով[69]։ Որբանոցի շինարարական աշխատանքների վրա ծախսվեց շուրջ 30 հազար եգիպտական ոսկի[70]։

տարվում են թուրքական որբանոցներ, տե՛ս Վ. Սահակեան, *«Քելեկյան» եւ «Սիսվան» որբանոցների գործունեությունը, «Բանբեր Մատենադարանի», 2015, թիւ 22, էջ 541։*

[62] *Տե՛ս «Արեւ», Ալեքսանդրիա, 1919, թիւ 19 (637), 23 յունիս։*

[63] *Տե՛ս «Արեւ», Ալեքսանդրիա, 1919, թիւ 19 (637), 23 յունիս։*

[64] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, մարտ–ապրիլ, թիւ 68։*

[65] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, մայիս–յունիս, թիւ 69։*

[66] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, յուլիս–օգոստոս, թիւ 70։*

[67] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, սեպտեմբեր–հոկտեմբեր, թիւ 71։*

[68] *Տե՛ս Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն, հաշուեկշիռ եւ տեղեկագիր..., էջ 116։*

[69] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1920, նոյեմբեր–դեկտեմբեր, թիւ 78։*

[70] *Տե՛ս* Վ. Սահակեան, *«Քելեկյան» եւ «Սիսվան» որբանոցների..., էջ 542։*

1919 թ. նոյեմբերի վերջին Պորտ Սայիդի գաղթականը ցրվեց՝ տեղափոխվելով Մերսին։ Մերսին տեղափոխվեց նաեւ ՀԲԸՄ-ի՝ Պորտ Սայիդի որբանոցը՝ 300 սանով, որի փոխադրման եւ տեղավորման համար տրամադրել է շուրջ 1350 եգիպտական ոսկի[71]։

1919 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին Հաճն է տեղափոխվում ՀԲԸՄ-ի՝ Դամասկոսի որբանոցը՝ շուրջ 66 որբերով[72]։ Դամասկոսի որբերի՝ դեպի Կիլիկիա փոխադրման գործում մեծ դեր խաղաց նաեւ ամերիկյան Կարմիր խաչը։ Նրանց են միանում նաեւ Հաճնի որբերը։ Որբանոցի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1919 թ. դեկտեմբերի 14-ին։ ՀԲԸՄ-ն Հաճն է ուղարկում առաջին անհրաժեշտ իրեր, ինչի շնորհիվ «Հաճնի որբանոցը կ՚ապահովուեր բաւականաչափ պաշարով եւ դրամով...»[73]։ ՀԲԸՄ-ի՝ Հաճնի որբանոցի յուրաքանչյուր որբի նվազագույն տարեկան ծախսը հաշվվում էր 12 եգիպտական ոսկի[74]։ Որբանոցն ուներ նաեւ բարերարներ, որոնք «կը նուիրէին տարեկան 20 անգլիական ոսկի կամ 60 ամերիկեան տոլար»[75]։ «Միություն» թերթի 1919 թ. մայիս–հունիս ամիսների հաշվետվությունից պարզ է դառնում, որ ՀԲԸՄ-ն Հաճնի որբանոցին հանգանակել է 300 եգիպտական ոսկի[76], հուլիս–օգոստոս ամիսների կտրվածքով՝ 3200 կտոր հագուստ՝ 450 եգիպտական ոսկի արժողությամբ[77]։

ՀԲԸՄ-ի գործունեությունը չի սահմանափակվել միայն որբերի եւ գաղթականների առօրյա կարիքների բավարարմամբ։ Կառույցն իրականացնում էր նաեւ որբ երեխաների դաստիարակությանն ու ապագայի կերտման հնարավորությունների ընդլայնմանն ուղղված քայլեր։ Այս մոտեցմամբ պայմանավորված՝ կրթության հարցը մշտապես առանցքային տեղ է զբաղեցրել ՀԲԸՄ-ի գործունեության օրակարգում՝ որպես ազգային վերածննդի հիմնարար գործոն։ Հարկ է նշել, որ բարեգործականի որբանոցները սոսկ ապաստարաններ չէին ծառայում որբերի համար, այլ «միանգամայն վարժարաններ՝ կրթական ուրոյն կազմակերպու-

---

[71] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, սեպտեմբեր–հոկտեմբեր, թիւ 71։*
[72] *ՀԲԸՄ-ի՝ Դամասկոսի հիվանդանոցը հիմնվել էր 1919 թ. ապրիլին։*
[73] *Տե՛ս Հայկական բարեգործական ընդհանուր միութեան Հաճնի որբանոցը..., էջ 27։*
[74] *Տե՛ս «Արեւ», Ալեքսանդրիա, 1919, թիւ 32 (650), 23 յուլիս։*
[75] *Տե՛ս Հայկական բարեգործական ընդհանուր միութեան Հաճնի որբանոցը..., էջ 41։*
[76] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, մայիս–յունիս, թիւ 69։*
[77] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, յուլիս–օգոստոս, թիւ 70։*

թեամբ»[78], որոնցից յուրաքանչյուրն ուներ պատսպարան, վարժարան, արհեստանոց, սրանցից զատ նաեւ դարմանատուն եւ հանդերձարան։ Պորտ Սայիդի որբանոցի օրինակով ՀԲԸՄ-ի՝ Կիլիկիայի որբանոցներում եւս որբանոցների տեսչությունները կարեւորում էին, կրթականից զատ, որբերի՝ որեւէ արհեստի տիրապետելու կարեւորությունը՝ հետագայում ապրուստն ինքնուրույն վաստակելու առումով։

ՀԲԸՄ-Ի ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԸ

Մերձավոր Արեւելքի տարբեր շրջաններում ապաստանած հայ որբերն ու գաղթականները, սոցիալ-հոգեբանական դժվարություններից բացի, բախվում էին նաեւ առողջապահական լուրջ խնդիրների։ Կիլիկիայում հայ գաղթականության վերաբնակեցման գործընթացին զուգընթաց, ՀԲԸՄ-ն գործնական քայլեր ձեռնարկեց ոչ միայն որբերին ապահովելու որբանոցներով, գաղթականներին՝ ժամանակավոր կացարաններով, այլեւ միաժամանակ տրամադրեց անհրաժեշտ բժշկական օգնություն՝ վերջիններիս առողջապահական կարիքների բավարարման նպատակով։

Կիլիկիա ներգաղթի հենց առաջին օրերին, երբ Մերսինն առաջին հանգրվանը դարձավ կիլիկիահայ գաղթականների համար, ազգային հիվանդանոց բացելը դարձավ անհրաժեշտություն։ 1919 թ. մայիսի 15-ին բացվում է ՀԲԸՄ-ի Մերսինի հիվանդանոցը՝ «հովասուն տան մը մէջ կոկիկ, մաքուր եւ լաւ տնտեսուած հաստատութիւն մըն է այդ հիւանդանոցը, որ Մերսինի մէջ կարեւոր պակաս մը լրացուց»[79], որտեղ անվճար բուժօգնություն էին ստանում ոչ միայն հայերը, այլ նաեւ հույները եւ հրեաները։ Ավելի քան երկու տարվա իր գործունեության ընթացքում բուժում է ստացել 550 մարդ, իսկ դարմանատան ծառայություններից օգտվել են շուրջ 6400-ը՝ այդ թվում հույներ ու հրեաներ, ծնվել է շուրջ 29 երեխա, որոնք ազատագրված Կիլիկիայում ծնված առաջին հայ երեխաներն էին[80]։

1919 թ. հուլիսին բացվեց ՀԲԸՄ-ի՝ Դյորթյոլի հիվանդանոցը ՝ Քելեկյան որբանոցին առընթեր, որտեղ բուժումը կատարվում էր անվճար։

---

[78] Տե՛ս Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն, հաշուեկշիռ եւ տեղեկագիր..., էջ 112։

[79] Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, մայիս–յունիս, թիւ 69։

[80] Տե՛ս Է. Մելքոնյան, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երեւան, «Մուղնի», 2005, էջ 102–103։

Հիվանդանոցի նախնական ծախսերը կազմել են 150 եգիպտական ոսկի, իսկ հոկտեմբեր ամսից սկսած՝ ՀԲԸՄ-ի՝ Մերսինի մասնաճյուղից ամեն ամիս ստանում էր 72 եգիպտական ոսկի[81]։

Դեռեւս 1919 թ. ապրիլին Դամասկոսում բացված ՀԲԸՄ-ի հիվանդանոցը օգոստոսին արդեն տեղափոխվել էր Հաճն։ «Հայ ձայն»-ի թղթակիցը, արժեւորելով ՀԲԸՄ-ի գործունեությունը, նշում էր, որ. «Միութիւնը հաստատած է Կիլիկիոյ մէջ մէկէ աւելի հիւանդանոցներ ու դեղարաններ, դարմանատուն, արհեստանոց ու որբանոցներ ահագին ծախս մը ընելով այս ամենուն... հետեւաբար օգնենք Բարեգործականին, որպէսզի ան ալ ի վիճակի ըլլայ օգնելու հայ ժողովուրդին»[82]։

Նշենք, որ ՀԲԸՄ-ի՝ հանգանակություններին հնարավորինս լայն մասնակցություն ապահովելու կոչերին, որոնց շնորհիվ պահպանվում էին կառույցի հոգածության ներքո գործող որբանոցներն ու հիվանդանոցները, անմասն չմնաց նաեւ Կիլիկիո Սահակ կաթողիկոսը։ Նա իր կոնդակով համայն հայությանը կոչ էր անում արթնության՝ չխնայել ոչինչ եւ միանալ ազգանպաստ այդ նախաձեռնությանը. «Տարագրության եւ ջարդերի չորս տարիների ընթացքում ամենամեծ հարվածը կրողներից մեկը դարձավ հայ դպրոցը. «Նոր սերունդէն շատեր այդ տարիներու ընթացքին զուրկ դպրոցէ եւ դաստիարակութենէ, թափառական անապատներու եւ օտար երկիրներու մէջ մոռցան նոյնիսկ իրենց մայրենի լեզուն, եւ հարկադրուեցան որդեգրել օտար լեզուներու գործածութիւնը... ուստի կը յորդորեմ զՁեզ ամենքնիդ, որպէս զի առձեռն գտնուած բոլոր միջոցները տրամադրէք հայկական դպրոցներու վերակազմութեան անմիջական գործին, մինչեւ որ Ազգային իշխանութիւնը ի վիճակի ըլլայ մշակելու կրթական ընդհանուր ծրագիր մը, Հայաստանի եւ Կիլիկիոյ բոլոր ներկայ վարժարաններուն համար, որպէս զի կարենանք պատրաստել Հայ հոգիով եւ նկարագրով սերունդ մը, որ ընդունակ ըլլայ գործի, յառաջադիմութեան, արուեստներու եւ վաճառականութեան, ինչպէս նաեւ զինուորական կեանքի, Հայրենիքի եւ անոր դրօշին պահպանութեանը համար»[83]։ ՀԲԸՄ-ի՝ Կիլիկիայի հիվանդանոցները կարեւոր դեր խաղացին ջարդերից ու տեղահանությունից փրկված կիլիկիահայ գաղթականության պահ-

---

[81] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1919, նոյեմբեր–դեկտեմբեր, թիւ 72։*
[82] *Տե՛ս «Արեւ», Ալեքսանդրիա, 1919, թիւ 83 (698), 19 նոյեմբեր։*
[83] *Տե՛ս «Արեւ», Ալեքսանդրիա, 1919, թիւ 83 (698), 19 նոյեմբեր։*

պանման եւ առողջության վերականգնման գործում՝ հատկապես Մեծ եղեռնից հետո ստեղծված ծանր ու վտանգավոր պայմաններում։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կիլիկիահայության վերադարձի եւ Կիլիկիայում նոր կյանքի վերածնման գործում ՀԲԸՄ-ի ունեցած դերի վերլուծությունը, կարող ենք արձանագրել, որ այդ կառույցն իր կազմակերպչական կարողություններով, ռեսուրսներով եւ նվիրվածությամբ էական ներդրում ունեցավ 1919 թ. Միջագետքում ապաստանած արեւմտահայ գաղթականների՝ դեպի Կիլիկիա վերադարձի եւ վերակառուցման գործում։ Ջնայած կազմակերպության ցուցաբերած նպաստները բազմազան էին, այնուամենայնիվ, նրա հիմնական գործունեության առանցքում մնացին որբերի խնամքն ու նրանց առողջապահական խնդիրների լուծումը։

Առանցքային է եղել ՀԲԸՄ-ի դերը կիլիկիահայության վերադարձի գործում թե՛ մարդասիրական, թե՛ կազմակերպչական եւ թե՛ քաղաքական առումներով։ Կառույցը համագործակցեց նաեւ օտար կազմակերպությունների հետ՝ ապահովելու հայերի վերադարձի հնարավորությունները։

Աշխարհաքաղաքական նկատելի փոփոխությունները, օրեցօր հզորացող քեմալական շարժմանը սիրաշահելու՝ դաշնակից տերությունների գործելաոճը վճռեցին կիլիկիահայության եւ Կիլիկիայի ճակատագիրը։ Թուրք ազգայնականների նկատմամբ Ֆրանսիայի որդեգրած երերուն ու անվճռական քաղաքականությունը հանգեցրեց Կիլիկիայի վերջնական տապալմանը եւ կիլիկիահայության ողբերգական դեպքերին։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

ՀԲԸՄ, Հայոց ցեղասպանություն, գաղթական, որբանոց, հիվանդանոց, կիլիկիահայություն, Մերսին, Ադանա։

РЕЗЮМЕ

После Мудросского перемирия Армянский всеобщий благотворительный союз (AGBU) постепенно расширил свою деятельность, сосредоточившись на реабилитации армян выживших после Геноцида. Среди его основных задач были содействие возвращению армянских беженцев в Киликию, восстановление армянских общин в регионе, спасение и забота о сиротах, а также организация образовательных инициатив. Движение репатриации, начавшееся в 1919 году, стало ярким свидетельством исторической памяти, стойкости и глубокой привязанности армянского народа к своей исконной родине. Содействуя возвращению армян в Киликию, AGBU стремился не только обеспечить их физическое выживание, но и сохранить национальную идентичность в условиях быстро меняющихся политических реалий. Хотя эти усилия в конечном итоге не дали долгосрочных результатов, потерпев неудачу из-за антиармянской политики кемалистов, они, тем не менее, остаются важной страницей в современной истории армянского народа.

SUMMARY

Following the Armistice of Mudros, the Armenian General Benevolent Union (AGBU) gradually expanded its activities, focusing on the rehabilitation of Genocide survivors. Among its primary missions were facilitating the return of Armenian refugees to Cilicia, rebuilding Armenian communities in the region, rescuing and caring for orphans, and organizing educational initiatives. The repatriation movement that began in 1919 stood as a powerful testament to the historical memory, resilience, and enduring attachment of the Armenian people to their ancestral homeland. In facilitating the return of Armenians to Cilicia, the AGBU sought not only to ensure their physical survival but also to preserve their national identity amid rapidly changing political realities. Although these efforts ultimately did not yield lasting results, having failed due to the anti-Armenian policies of the Kemalists, they nevertheless remain an important chapter in the modern history of the Armenian people.